ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՊԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Պարարվեստի հարգելի՛ ներկայացուցիչներ, շնորհավորում եմ բոլորիդ Պարի միջազգային օրվա առթիվ:

Հայկական մշակույթի մեջ պարն իր առանձնահատուկ տեղն է գրավում՝ որպես ազգային արժեքների փոխանցման յուրահատուկ գործիք:

Այն հնարավորություն է լավագույնս պատկերացում կազմել ժողովրդի ինքնության, աշխարհի նկատմամբ ունեցած վերաբերմունքի ու արժեհամակարգի մասին:

Պարն է այն գործիքը, որն ունակ է փոխանցել զգացողություններ ու արժեքներ, որոնք հնարավոր չէ ձևակերպել խոսքով:

Պարարվեստի հարգելի՛ ներկայացուցիչներ, հայկական պարերն ունեն հազարամյակների պատմություն: Սերնդեսերունդ փոխանցվելով որքան էլ փոփոխվել է դրանց ձևն ու կատարողականությունը, էությունը փոփոխություն չի կրել, ուստի մեծ է ձեր ներդրումը ազգային արժեքների պահպանման և փոխանցման գործում:

Շնորհակալություն եմ հայտնում բոլորիդ՝ մեր մշակույթի պահպանման գործում ունեցած ավանդի համար, մաղթում եմ նոր բեմեր, ծափողջույններ ու մասնագիտական նվաճումներ:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան